

Բարեփոխումներ եւ վարկային ծրագրեր

«Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի արդյունքների եւ «Կրթության բարելավում» ծրագրի մեկնարկի լուսաբանմանը նվիրված երկօրյա համաժողով

սկիզբն՝ էջ 1

Արմեն Աշոտյանի խոսքով՝ ծրագրի մեկնարկից անցել է վեց տարի, որի ընթացքում ծրագրի բաղադրիչները հրթացան փոխվել են՝ արձագանքելով ժամանակի մարտահրավերներին: «Ծրագրին իրականացվել է բացարձակ թափանցիկության եւ արդյունավետության պայմաններում: Ավելին, գնումների գործընթացում առաջ են եկել բազմաթիվ խնայողություններ: Միայն ավագ դպրոցների գույքի համալրման գործընթացից առաջացած խնայողության արդյունքում քանի տոկոսով ընդլայնվել է ծրագրում ներառված դպրոցների ցանկը», - նշել է նախարարը՝ անդրադառնալով նաեւ ծրագրի հիմնական ուղղություններին: «Առաջին կարեւոր բաղադրիչը ՀՅ բոլոր մարզերում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումն է: Նախադպրոցական կրթությունն ամենաբրոյլ օղակն է եղել անկախության տարիների ընթացքում. համայնքների 2/3-ում բացակայել է որևէ նախադպրոցական հաստատություն: Ծրագրի արդյունքում ՀՅ բոլոր մարզերում բացվել է 280 նախակրթարան, որտեղ հաճախում է շուրջ 20000 երեխա: Կարելի է վստահաբար ասել, որ սա ամենաարդյունավետ ծրագրերից մեկն է, եւ կարեւոր է, որ ապահովվել է նաեւ ծրագրի շարունակականության հարցը: Այսինքն՝ արդեն հիմնաված նախակրթարանները պետքութեից կշարունակեն աջակցություն ստանալ նաեւ ծրագրի ավարտից հետո: Երկրորդ կարեւոր բաղադրիչն ավագ դպրոցների գարգացումն է: Ծրագրի շրջանակում բոլոր ավագ դպրոցները համալրվել են ժամանակակից ուսումնական գրականությամբ, լաբորատորիաներով, գրադարաններով, վերապատրաստվել են ուսուցիչներ: Դեւելուով վիճակագրությամբ՝ երեսում է, որ հաճախ մարզերի ավագ դպրոցներն իրենց արդյունավետությամբ գերազանցում են մայրաքաղաքի դպրոցներին: Իհարկե, կան բազմաթիվ չլուծված խնդիրներ, սակայն, վստահեցնաւ են ու ճանահետ անհետ



ծրագրի Երրորդ կարեւոր բաղադրիչը բուհական համակարգում հավատարմագրում է նաև ստուգում է եւ զարգացումը: «Ծրագրի շրջանակում Որակի ապահովման ազգային կենտրոնը համարվել է համապատասխան ռեսուլյաներով, ինչպես նաև բուհերում ներմուծվել է որակի ապահովման նշակույթը: Որոշ բուհեր արդեն անցել են ազգային հավատարմագրում, իսկ որոշմերը՝ նաև Եվրոպական հավատարմագրում: Զորորոր կարեւոր բաղադրիչը նորարարության մրցակցային հիմնադրամի շրջանակում ՀՀ 10 բուհերում ժամանակակից տեխնոլոգիական ծրագրերի իրականացումն է: Այս բաղադրիչի արդյունավետությանը անդրադարձել է նաև Համաշխարհային բանկի տնօրենն՝ ՀՅ փորձը ճատանանշելով որպես օրինակելի», - նշել է նախարարը:

Արմեն Աշոտյանն իր բացման խոսքի եզրափակիչ մասում անդրադարձել է ազգային դպրոցի նկարագրին: «Դամուկը ուժամ ողորում մեր տեսվականը քաղկացած է երեք մասին. առաջինը՝ պահպանել ազգային դպրոցի ավանդույթները եւ ստեղծել ազգային բովանդակությամբ դպրոց, երկրորդը՝ պահպանել խորհրդային դպրոցի այն ավանդույթները, որորն ունի լայնոր են ակիրամն և ի-

նել, մասնավորապես՝ գիտելիքի եւ մանկավարժի արժեւորումը, բնագիտական առարկաների կարեւորումը եւ այլն, եւ երրորդ՝ կրթական համակարգը դարձնել ժամանակակից: Այսինքն՝ ազգային, բայց նաև ժամանակակից դպրոց՝ սա է մեր տեսլականը», - ասել է Կոմենց Աշոտյանը:

Նախարարի ելույթից հետո
լրագործները բազմաթիվ հարցեր
են ուղղել նախարարին, որոնք,
մասնավորապես, վերաբերել են
նախադպրոցական հաստատու-
թյունների, ավագ դպրոցների կա-
յացման, կրթության ոլորտում մի
շարք երկրների հետ համագոր-
ծակցության խնդիրներին եւ այլն:

Այնուհետեւ համաժողովի մասնակիցները հանդես են եկել համապատասխան գեկույցներով եւ պատասխանել լրագրողների հարցերին։ Կրթական ծրագրերի կենտրոնի տնօրեն Յասիկ Ղազարյանը ներկայացրել է «Կրթուրյան որակ եւ համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի ձեռքբերումները եւ «Կրթուրյան բարեխավում» նոր ծրագրի մասին բանագիրը։

ηηλωρ: Ρωνακυνούρ μετρικαγγείρει
ει νατει στραφήρι φημωναναψηριμαν
αηρηγητηρειρειρ` Σηχωαραγηήν αρη-
ρωασμαν ρηνκετηρακηγητηριούν` 25.0
μέτρα υπούρηλωρ, Τζ καρωαψηρητη-
ριούν` 6.26 μέτρα υπούρηλωρ: Ορ-
ψει στραφήρι ιημάνακαν δένηρεβ-
ρητηιμετηρ` Τωσηδήκι Τωραρημανρ
αρχει ει, πρ Τωραστηανή βρητηρ
μαρρητηριούν 280 ονακυναψηρηρη-
καν ιωαστηατηρητηριούνετηρ ει
ιημάνψει` χρητηρ 20000 έτηκυναμε-
τηρι ρηνηρητηριούπι: Σωκυναδειρηνψει ει

ուսուցիչների մասնագիտական զարգացնան ծրագիր, մշակվել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր, հրականացվել է ատենստավորման ենթակա 12000-ից ավելի ուսուցիչների վերապատրաստում: 1420 միջնակարգ դպրոցներ միացել են Կրթական համացանցին, աջակցություն է հանդես բերվել ավագ դպրոցների ցանցի ստեղծմանը եւ այդ դպրոցներում նեսուրու կենտրոնների հիմնանը, դրանց սարքավորումներով ու կրթական նյութերով հաճալինանը, հանրակրթության եւ բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծմանն եւ շահագործմանը: Աջակցություն է հանդես բերվել նաև Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին, բուհերում ներքին որակի հաճակարգի ներդրմանը, բուհերի ինստիտուցիոնալ հավաստագրման գործընթացին, բուհերում նորարարական փորձական ծրագրերի եւ մանկավարժական կրթության բարեփոխումների հրականացմանը:

Բանախոսը ներկայացրել է նաև «Կրթության բարելավում» հնգամյա նոր ծրագրի ընդհանուր արժեքը՝ 37.500 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի առաջին բաղադրիչը հանրակրթության որակի բարելավումն է՝ 27.5 մլն ԱՄՆ դոլար, երկրորդ բաղադրիչը՝ աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը՝ 6.25 մլն ԱՄՆ դոլար, երրորդ բաղադրիչը՝ Ծրագրի կառավարում, մշտադիտարկում եւ գնահատում՝ 3.75 մլն ԱՄՆ դոլար: Ֆինանսավորման աղբյուրներն են՝ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ՝ 15.0 մլն ԱՄՆ դոլար, Միջազգային զարգացման ընկերակցություն՝ 15.0 մլն ԱՄՆ դոլար, ՀՀ կառավարություն՝ 7.5 միլլ. ԱՄՆ դոլար:

၃၃ ၄၇၈ հանրակրթության
վարչության պետ **Նարինե**
Չովհաննիսյանը ներկայացրել է
«Կրթության որակ Եւ համապա-
տասխանություն» երկորդ ծրա-
գի «Ազակցություն ավագ դպրո-
ցի բարեփոխումներին» բաղադ-

Հարունակությունը՝ Էջ 7



Բարեփոխումներ Եւ Վարկային ծրագրեր

«Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի արդյունքների եւ «Կրթության բարելավում» ծրագրի մեկնարկի լուսաբանմանը նվիրված երկօրյա համաժողով

սկիզբն՝ էջ 6

Ըստ բանախոսի՝ հիմնական կատարվելիք աշխատանքներն են՝ մոտ 17 ավագ դպրոցների հիմնանորոգում՝ առնվազն մեկական՝ յուրաքանչյուր մարզում, ավագ դպրոցներին ժամանակակից տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիական սարքավորումներով ու էլեկտրոնային նյութերով ապահովում, ուսուցիչների վերապատրաստում ՏՀՏ ռեսուլսների կիրառման ուղղությամբ, ավագ դպրոցների ենթարադարձիչ գործողությունների մոնիթորինգ եւ գնահատում։ Նարին Հավիաննիսյանն անդրադարձել է նաև ավագ դպրոցների հետ կապված խնդիրներին։ Ըստ նրա՝ ավագ դպրոցներում դեռ շատ խնդիրներ եւ անելիքներ կան շենքային պայմանների, ժամանակակից տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիության եւ կիրառման, ժամանակակից պահանջներին ուսումնանյութական բազայի հաճապատասխանության տեսանկյունից, ցածր է հանրակրթության երրորդ աստիճանում սովորողների ընդգրկվածության ցուցանիշը։ Բացի այդ, ավագ դպրոցները սահմանափակ կարողություններ ունեն ապահովելու բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը։ Նարին Հովհաննիսյանը խոսել է նաև հիմնական ակնկալվող արդյունքների նաևին։ Ըստ բանախոսի՝ դրանք են՝ վերանորոգված եւ նորագույն նյութատեխնիկական բազայով համալրված, կայացած ու արդյունավետ գործող ավագ դպրոցների ցանց, 17 վերանորոգված ավագ դպրոց, ավագ դպրոցներում սովորողների ընդգրկվածության աճ, ՏՀՏ-ի ուղղությամբ վերապատրաստված ուսուցիչներ, ավագ դպրոցի մանկավարժական կարերի մասնագիտական որակի աճ։

Համաժողովի մյուս բանախոս, ՀՀ ԿԳԽ բարձրագույն եւ հետքուհական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուրենիասյանը ներկայացրել է Բոլոնիայի գործընթացի համատեքստում բարձրագույն կրթության բարեփոխումներին ցուցաբերված աջակցության հիմնական ուղղությունները: «Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրով, որպես բարձրագույն կրթության հիմնական ուղղություններ, բանախոսը ներկայացրել է աջակցությունը բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ստեղծմանը, մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏ) ներդնումը, բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի կատարելագործումը եւ նանկավարժական կրթության բարեփոխումների իրականացումը: Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ստեղծման աջակցման շրջանակում իրականացվել է «Մասնագիտական կրթության

որակի ապահովման ազգային
կենտրոն» հիմնադրամի կարողու-
թյունների հզորացում, չը բոլե-
րում որակի ապահովման մշա-
կույթի զարգացում, հավատար-
մագրման նոր գործնթացի մեկ-
նարկում։ Մասնագիտական կր-
թության կառավարման տեղե-
կատվական համակարգը մշակ-
վել է ներդրվել շուրջ 183 բարձ-
րագույն, միջին մասնագիտական
եւ նախնական ուսումնական
հաստատություններում։ Բարձրա-
գույն կրթության ֆինանսավոր-
ման համակարգի կատարելա-
գործնան նպատակով մշակվել է ներդրվել են ուսանողների ֆի-
նանսական աջակցության ծրագ-
րեր, հատկացվել են նորարարա-
կան ծրագրերի դրամաշնորհներ
10 բարձրագույն ուսումնական
հաստատությունների։ Բանախո-
սը մանրամասն ներկայացրել է
նաեւ վարկային ծրագրի շրջանա-
կում մանկավարժական կրթու-
թյան բարեփոխումների իրակա-
նացումը։

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրին Արտակ Պողոսյանը ներկայացրել է «ՏՏՏ ներդրումը կրթության կառավարման եւ ուսումնական գործընթացներում» շնորհանդեսը: Նրա ճենակերպմանը՝ վարկային ծրագիրի շրջանակում ամենակարեւոր ճեռքբերումը Հայաստանի կրթական ցանցի ամբողջացումն է: «Կարողացել ենք վարկային միջոցներում օգտագործել եւ Հայաստանում ստեղծել հսկայական կրթական ցանց, որտեղ ներգրավված են Հայաստանի Հանրապետության բոլոր դպրոցները եւ մոտ 20 նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Ի դեպ, ոչ միայն վարկային միջոցներ են օգտագործել, մոտ 300 դպրոց ցանցին միացվել է 77 պետական բյուջեի միջոցներով: Ցանցի սպասարկումը եւս իրականացվում է 77 պետական բյուջեի միջոցներով, ինչը կազմում է տարեկան 800 մլն դրամ»,- իր խոսքում նշել

A black and white photograph showing four middle-aged men seated behind a long, dark wooden conference table. From left to right: the first man is wearing a dark suit, a striped tie, and glasses; the second man is wearing a light-colored shirt over a dark tie; the third man is wearing a light-colored button-down shirt and glasses; the fourth man is wearing a light-colored zip-up jacket over a dark shirt and glasses. They are all looking towards the left side of the frame. The table is covered with papers, a bottle of water, and glasses. The background features large windows with curtains and dark wood paneling.

մալ աշխատել ին
մինչդեռ մենք դպրոց
ապահովում ենք առև
զարիթ/վկի արագությ
ութ, իսկ Երեւանուն
խնդիր ենք դրել ապա
վազն 8 մեգարիթ/վր
բյուն, բայց Երեւանին
40%-ը մեր ցանցին մի
տիկամալուխային կա
հնարավորություն է և
վազն 20 մեգարիթ/վր
կուրյուն ապահովե
պայմանագրով նախ
առնվազն 8 մեգ
ԿՏԱԿ-ի տնօրենը Երս
ԴՅ բոլոր դպրոցները
այնպիսի կապ, ինչպիսի
րավային Կորեայում
բիթ/վրկ արագություն

Անդրադասնալով խնդիրներին՝ Ա. Պողոսյանը նշում է հանայնքներ, որտեղ դեռևս USB մոդեմներով է կապը մատուկարարվում, քանի որ այլ ելք ուղղակի չկա. «Յավոր սրտի, մենք ունենք վատ հարեւան, ու կան տեղեր, որտեղ ցանց ապահովելու այլ տարբերակ չի եղել, սակայն տեխնոլոգիաները զարգանում են, եւ մինչեւ այս տարվա վերջ, օրինակ, Կայոց Զորի մարզում մենք այլևս չենք ունենա խնդիր, USB մոդեմով մատուկարարման հարց եւ արագությունը դպրոցների համար կլինի առնվազն 5 մետարիք/վրկ՝ «Մեկ հանակարգիչ՝ մեկ երեխային» պիլոտային ծրագրի շրջանակներում»։ Արտակ Պողոսյանը հայտնեց նաև, որ ստեղծվել է ծրագիր, որը հնարավորություն է տալիս, որ դպրոցն ինքը ստեղծի իր կայքը՝ «20 րոպեում»։ Նրանց տրամադրովում է կայքի նմուշը, որի վրա արվում է ցանկացած փոփոխություն եւ կայքը դառնում է գործող միջոց տվյալ կրթական հաստատության համար. «Յավոր սրտի, դպրոցները պասիվ են եւ չեն ստեղծում իրենց կայքերը, բայց իհնա կա օրենսդրական պահանջ, որը պարտադրում է հրապարակել դպրոցի ներքին գնահատման արդյունքները՝ կամ լիազոր մարմնի կայքում, կամ դպրոցի կայքում։ Արդյունքում՝ դպրոցները սկսել են ակտիվացնալ եւ ստեղծել սեփական կայքեր եւ ար-

Կրթական ծրագրերի կենտրոնի ենթաբաղադրիչի ղեկավար Արմինե Խաչատրյանը ներկայացրել է «Կպողին երեխաների պատրաստվածության բարձրացման եւ կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման բաղադրիչը» եւ դրա շարունակականության ապահովումը թեմայով գեկույցը։ Ըստ բանախոսի՝ «Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային առաջին եւ երկրորդ ծրագրերի շրջանակներում 2010-2014 թվականներին Դայաստանի 11 մարզեղում իրականացվել է 280 նախակրթարանների հիմնան միկրոծրագիր։ Ուղղակի շահառուների թիվը (4-6 տարեկան երեխաներ) կազմել է մոտ 12.000։ 2010-2012 թթ. «Քայլ առ քայլ» ԲՀ-ի կողմից վերապատրաստվել են 124 հաստատությունների ավելի քան 250 դաստիարակ։ Նրա խոսքով՝ ստեղծված նախակրթարաններից 78-ը գործում են նախադպրոցական հաստատություններում, մնացած 202-ը՝ դպրոցների հիմքի վրա։ Անդրադառնալով նոր՝ Կրթության բարելավում վարկային նոր ծրագրին, որպես հիմնական նպատակ բանախոսը նատնանշել է՝ 5-6 տարեկան երեխաների տարրական կրթությանն առյունավետ նախապատրաստումը՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ, նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության մեջացումը՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներիներին։ Արմինե Խաչատրյանի խոսքով՝ միկրոծրագրի բյուջեն կազմվում է 2 առյուրից՝ վարկային միջոցներից, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժեքի 75%-ը, եւ համայնքային/ծնողական ներդրումներից, որի մինիմում արժեքը պետք է կազմի ծրագրի ընդհանուր արժեքի 25%-ը։ Դաստատություններին տրամադրվող դրամաշնորհների առավելագույն չափը կարող է կազմել 22,000 ԱՄՆ դոլարին հնարժեք ԲՀ դրամ։

Հարունակությունը՝ էջ 8

